# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ 26.06.2017 ԹՎԱԿԱՆԻ N «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26-Պ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք. Երևան** **« 22» «08» 2017թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Բաբայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետը և հիմք ընդունելով 26.06.2017թ. N «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26-Պ» պայմանագրի 7.5 կետը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. 26.06.2017թ. N «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26-Պ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13602919.96 (Տասներեք միլիոն վեց հարյուր երկու հազար ինը հարյուր տասնինը դրամ իննսունվեց լումա) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները.

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը »:

2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 Հավելված տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:

3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 Հավելված վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 2-ի.

### 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից.

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից. Համաձայնագրով հաստատված N 1 Հավելվածը՝ 9 էջից, N 2 Հավելվածը՝ 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը սույն Համաձայնագրով հաստատված Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 90001101[illegible]

ՀՎՀՀ 0[illegible]506615

Աշխատակազմի ղեկավար ................ Ա. Գրիգորյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ

ՀՀ ք. Երևան, Ծ. Աղբյուր 55ա

«Հայկոնոմ բանկ» ԲԲԸ

Հ/Հ 163058000791

ՀՎՀՀ 00851861

Տնօրեն ................ Գ. Բաբայան

(ստորագրություն)

Հավելված N 1
«26» հունիսի 2017թ. կնքված
N ԱԱԿՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26-Պ ծածկագրով պայմանագրի
27.06.2017թ. կնքված Համաձայնագիր 1-ի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության | | | | | | Մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | | հասցեն | ժամկետը |
| 9 | 51411130 | Ամրոց ուղղի օրթեզ իողով, լամինացիայով | հատ | 305950 | 305950 | 1 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 10 | 51411130 | Ազդրի օրթոպրոթեզ կաշվից | հատ | 304750 | 304750 | 1 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 11 | 51411130 | Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | հատ | 277650 | 277650 | 1 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 13 | 51411130 | Նախաբազկի պրոթեզ՝ ՊՆ7-18Պ պլաստիկից | հատ | 112987.5 | 451950 | 4 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 14 | 51411130 | Բազկի պրոթեզ՝ ՊՊ4-23Պ պլաստիկից | հատ | 172950 | 172950 | 1 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 15 | 51411130 | Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար/՝ ՊՆ3-12 | հատ | 236087.5 | 944350 | 4 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 16 | 51411130 | Սրունքի պրոթեզ /ծնկատակի հենարանով/՝ ՊՆ3-13 | հատ | 245950 | 245950 | 1 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 17 | 51411130 | Ազդրի պրոթեզ ՊՆ6-35 | հատ | 315787.5 | 1263150 | 4 | | Ըստ պահանջի | 3 օր |
| 18 | 51411130 | Էկզոսկելետոր սրունքի պրոթեզ /լամինացիայով/՝ ՊՆ8 01 | հատ | 161495 | 1614950 | 10 | | Ըստ պահանջի | 3 օր |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 51410130 | Էնդոսկելետար սրունքի պրոթեզ/լամինացիայով/ (ՊՍԷ-02) | հատ | 428987.5 | 1715950 | 4 | Ըստ պահանջի | 3 օր |
| 20 | 51411130 | Էնդոսկելետար ազդրի պրոթեզ/լամինացիայով/ (ՊՆԷ-01) | հատ | 700594.44 | 6305349.96 | 9 | Ըստ պահանջի | 3 օր |
| | | **Ընդամենը** | | | **13602949.96** | | | |

**Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում օրթեզների պատրաստման ծառայությունների**

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օրթեզների պատրաստման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, իսկ ծառայությունների մատուցումը կազմակերպվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով սահմանված կարգով, ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

| Չափ-աբա-ժին | Անվանում | Ենթատեսակ | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 9 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով. | 14.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, լամինացիայով (KAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը. Հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, սրունք-թաթային հոդն անշարժ է: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով. ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| | | 14.2 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (KAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3 րդը. Հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով. ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |

| | | | |
|---|---|---|---|
| | | 14.3 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, լամինացիայով (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է մետաղական շինանքներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող |
| | | 14.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինանքներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող |
| | | 14.5 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային հոդով, լամինացիայով (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային հոդում: Պատրաստվում է մետաղական շինանքներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| | | 14.6 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային և ծնկան հոդերով, լամինացիայով (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային և ծնկան հոդերում: Պատրաստվում է մետաղական շինանքներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| | | 14.7 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային, ծնկան և սրունք-թաթային հոդերում: Պատրաստվում է մետաղական շինանքներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| 10 | Ազդրի օրթոպրոթեզ կաշվից | | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է մետաղյա շինանքներից և կաշվից: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ |
| 11 | Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | 19.1 Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է պլաստիկից և |

| | | |
|---|---|---|
| | | ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով<br>**Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ |
| | 19.2 Եռակողմ գոտիչ օրթեզ հոդով, պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, ստորին վերջույթը գտնվում է զատված դիրքում, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է պլաստիկից և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով<br>**Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող |

**1-11 չափաբաժինների օրթեզներին ներկայացվող այլ պահանջներ.**

1. **Ստանդարտ.** օրթեզները պետք է պատրաստվեն միջազգային՝ ISO ստանդարտներին համապատասխանող նյութերով և տեխնոլոգիաներով, ապահովեն համապատասխան ամրություն, լինեն թեթև, կրելու համար հարմար, կոսմետիկ առումով գեղեցիկ, հեշտ ենթարկվեն սանիտարական մշակման:
2. **Օրթեզների պատրաստման նյութեր.** օրթեզները պատրաստվում են կաշվե-մետաղական շինաներով, պլաստիկ արհեստական նյութերից, տեքստիլ և համակցված (բարձր ջերմաստիճանային և ցածր ջերմաստիճանային թերմոպլաստներ՝ պոլիպրոպիլեն և պոլիէթիլեն, նյութեր լամինացիայի համար, ածխապլաստիկ նյութեր և այլն): Հոդերը պատրաստվում են մետաղից (ալյումին, տիտան, երկաթ), պլաստիկից, կոմբինացված (պլաստիկ-մետաղ), կարբոնային և այլն: Օրթեզները պետք է պատրաստվեն հիպոալերգիկ նյութերից, բացառեն ճնշումը չթույլատրվող հատվածների վրա (ավշային հանգույցներ, կոճքագեղձեր, ոսկրային դուրս ցցված հատվածներ, մակերեսային անոթներ, նյարդեր):
3. **Օրթեզների պատրաստում և տրամադրում.** օրթեզները պետք է պատրաստվեն անհատապես, անձին տրամադրվեն շահագործման, պահպանման, խնամքի ձևերը մանրամասն բացատրելուց (գրավոր տրամադրում է հուշաթերթիկ) և փորձարկումից հետո: Օրթեզավորման ժամկետը նախատեսվում է 5-10 օր: Այդ ընթացքում հաշմանդամություն ունեցող անձը առնվազն 2 անգամ ներկայանում է կազմակերպություն՝ չափափորձարկման: Օրթեզները պետք է լինեն չօգտագործված, պատրաստված լինեն ամբողջությամբ նոր նյութերից: Գույնը ըստ հաշմանդամություն ունեցող անձի ցանկության: Օրթեզների կառուցվածքային բնութագրերը պետք է համապատասխանեն հիվանդության բնույթին, ծառայեն համապատասխան խնդիրների վերացմանը, չպետք է խորացնեն առկա ախտաբանական խնդիրները.
4. **Երաշխիքային ժամկետը.** շահագործման ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին:

**Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝**

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, օրթեզների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, իսկ մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության.

4. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում կազմակերպությունները պարտավոր է իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց ներկայացնել տեղեկություն այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ *պարփիրափուից սրացած ձևաչափով*:

5. Ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

**Պրոթեզաօրթոպեդիկ**
**պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների**

Ստորև բերված տեխնիկական բնութագրերը կիրառվում են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և դրանց վերանորոգման ծառայությունների չափաբաժինների նկատմամբ:

Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և դրանց վերանորոգման հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ, իսկ ծառայությունների մատուցումը իրականացվում է համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով հաստատված կարգի:

Որոշման համաձայն պարագա ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում են՝

## Վերին վերջույթի պրոթեզ

| | |
|---|---|
| **13-14-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները** | |

| | |
|---|---|
| 1. Ստանդարտը | Տեղական արտադրության և ԱՊՀ երկրների կամ համարժեք նյութերից և տեխնոլոգիայով արտադրվող |
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Վերին վերջույթների համար հարմար, կոսմետիկ, ձգողական և միո, պահանջվող տեսակի հանգույցներով, շինա-կաշվի և պլաստիկ նյութերով պատրաստվող<br>Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան |
| 3. Անվտանգությունը | Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին |
| 4. Գնման պայմանները | Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողությունը 15 օրից մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկումներ, շահառուին սովորեցվում պրոթեզից օգտվելու ձևը |
| 5.Պարագայի տրամադրումը | Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո |
| 6.Երաշխիքային ժամկետը | Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին |
| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
| **Չափաբաժին 13**<br><br>Նախաբազկի պրոթեզ՝ ՊՌ2-18Պ պլաստիկից | Շարժումներ չկատարող կոսմետիկ պրոթեզ<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 14**<br><br>Բազկի պրոթեզ՝ ՊՌ4-23Պ պլաստիկից | Շարժումներ չկատարող կոսմետիկ պրոթեզ<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |

## Ստորին վերջույթի պրոթեզ

| | |
|---|---|
| **15-20-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները** | |
| 1. Ստանդարտ | Տեղական արտադրության և ԱՊՀ երկրների նյութերից և տեխնոլոգիայով արտադրվող |

| | |
|---|---|
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Շահառուի ստորին վերջույթների անդամահատվելուց առաջացած առանձնահատկությունների համապատասխան օգտագործվում է շինաներ, կոճեր, հանգույցներ, ինչպես նաև համապատասխան չափի կաշի, կապկա, շտրիպկա, վերտլյուգներ, թաթեր՝ մետաղյա կամ ռեզինե |
| 3. Անվտանգությունը | Շահառուին օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկև ֆիզիկական պահանջներին |
| 4. Գնման պայմաններ | Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողությունը 15 օրից մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկումներ, շահառուին սովորեցվում պրոթեզից օգտվելու ձևը |
| 5.Պարագայի տրամադրումը | Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո |
| 6.Երաշխիքային ժամկետը | Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին |
| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
| **Չափաբաժին 15**<br>Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար՝ ՊՆՅ-12 | Սրունքի պրոթեզ՝ շահառուին համար<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:*<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:*<br>*Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 16**<br>Սրունքի պրոթեզ /նստատեղի հենարանով՝ ՊՆՅ-13 | Սրունքի պրոթեզ՝ շահառուին համար: *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք*<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:*<br>*Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 17**<br>Ազդրի պրոթեզ ՊՆ6-35 | Ազդրի պրոթեզ՝ լամինացիայի ծայրատով<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* |
| **Չափաբաժին 18**<br>Էկզոսկելետար սրունքի | Էկզոսկելետար սրունքի պրոթեզ՝ լամինացիայով<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1* |

| | |
|---|---|
| պրոթեզ /լամինացիայով/ ՊՆ8-01 | *սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրափի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 19** Էնդոսկելետար սրունքի պրոթեզ/լամինացիայով/ ՊՆ8-02 | Էնդոսկելետար սրունքի պրոթեզ՝ լամինացիայով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրափի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրափի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 20** Էնդոսկելետար ազդրի պրոթեզ/լամինացիայով/ (ՊՆ9-01) | Էնդոսկելետար ազդրի պրոթեզ՝ լամինացիայով *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կապից հարմարանք:* |

Շահառուին տրամադրվող պարագաները և ծառայությունները պետք է լինեն չօգտագործված, նոր նյութերից:

**Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝**

6. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
7. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
8. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
9. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***.
10. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար.......................... Վ. [illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ

Տնօրեն.......................................... Գ. Բաբայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«26» հունիսի 2017թ. կնքված
N ՍՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26-Պ ծածկագրով պայմանագրի
22.08.2017թ. կնքված Համաձայնագիր 1-ի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի բաժանմանը համապատասխան (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 9 | 51411130 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով | | | | | | | 305950 | 305950 | 305950 | 305950 | 305950 | 305950 | 305950 |
| 10 | 51411130 | Ազդրի օրթոպրոթեզ կաշվից | | | | | | | 304750 | 304750 | 304750 | 304750 | 304750 | 304750 | 304750 |
| 11 | 51411130 | Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | | | | | | | 277650 | 277650 | 277650 | 277650 | 277650 | 277650 | 277650 |
| 13 | 51411130 | Նախաբազկի պրոթեզ՝ ՊՍ2-18Պ պլաստիկից | | | | | | | 225975 | 451950 | 451950 | 451950 | 451950 | 451950 | 451950 |
| 14 | 51411130 | Բազկի պրոթեզ՝ ՊՍ4-23Պ պլաստիկից | | | | | | | 172950 | 172950 | 172950 | 172950 | 172950 | 172950 | 172950 |
| 15 | 51411130 | Սրունքի պրոթեզ Կարճ ծայրատի համար՝ ՊՆ3-12 | | | | | | | 472175 | 944350 | 944350 | 944350 | 944350 | 944350 | 944350 |
| 16 | 51411130 | Սրունքի պրոթեզ Ճատուանի Խնճարանով՝ ՊՆ3-13 | | | | | | | 245950 | 245950 | 245950 | 245950 | 245950 | 245950 | 245950 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 5141130 | Ազդրի պրոթեզ ՊՆ6-35 | 631575 | 1263150 | 1263150 | 1263150 | 1263150 | 1263150 | 1263150 |
| 18 | 5141130 | Էկզոսկելետար սրունքի պրոթեզ /լամինացիայով/ ՊՆ8-01 | 807475 | 1614950 | 1614950 | 1614950 | 1614950 | 1614950 | 1614950 |
| 19 | 5141130 | Էնդոսկելետար սրունքի պրոթեզ/լամինացիայով/ ՊՆ8-02 | 857975 | 1715950 | 1715950 | 1715950 | 1715950 | 1715950 | 1715950 |
| 20 | 5141130 | Էնդոսկելետար ազդրի պրոթեզ/լամինացիայով/ (ՊՆ9-01) | 6305349.96 | 6305349.96 | 6305349.96 | 6305349.96 | 6305349.96 | 6305349.96 | 6305349.96 |
| | | **Ընդամենը** | **10607774.96** | **13602949.96** | **13602949.96** | **13602949.96** | **13602949.96** | **13602949.96** | **13602949.96** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ........ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ

Տնօրեն ........ Գ. Բաբայան
(ստորագրություն)
Կ.Տ.